Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Պ-606-31.05.2023,07.09.2023-ԳԿ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.10-ին կետով.
«10.10) **բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) անձ՝** կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ, որի ինտելեկտուալ, ստեղծագործական, սոցիալական և ֆիզիկական ներուժը կամ դրանցից մի քանիսը ակնհայտորեն միջինից բարձր են, որի հետևանքով անձը իր ներուժը լիարժեք զարգացնելու համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների (ծառայությունների, գործողությունների, միջոցների) կարիք ունի.»:

Հոդված 2. Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 11-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ. «11) Խթանել բոլոր սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացներում, այդ թվում՝ արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում՝ դասարանում ապահովելով խտրականությունից զերծ միջավայր և կանխարգելելով աշակերտների մեկուսացումը:»:

Հոդված 3. Օրենքի 28-րդ հոդվածի՝
1. 1-ին մասի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2.1 մասնակցելու երեխայի անհատական ուսուցման պլանի մշակմանը.»:
2. 1-ին մասը լրացնել նոր՝ 8-րդ կետով, հետևյալ բովանդակությամբ. «8) երեխայի կրթության իրավունքի իրացման, մանկավարժների և ծնողների հետ արդյունավետ փոխգործակցության, ինչպես նաև այլ դպրոցների նմանատիպ խմբերի հետ համագործակցության համար դպրոցում ստեղծելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողների փոխօգնության խումբ կամ միանալու արդեն ստեղծված փոխօգնության խմբերին:»:
3. 2-րդ մասի 1-ին կետում «կրթություն ստանալու համար» բառերից հետո լրացնել «և աջակցել դասապատրաստմանը.» բառերը:
4. 2-րդ մասի 3-րդ կետում «հարգալից վերաբերմունք» բառերից հետո լրացնել «մարդու, պետության,» բառերը:
5. 2-րդ մասը լրացնել նոր՝ 9-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ. «9. մասնակցել երեխայի անհատական ուսուցման պլանի իրականացմանը:»:

Հոդված 4. Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով.
«4.1) հաստատում է ուսումնական հաստատությունների ցանկերը.»:

Հոդված 5. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.18-րդ ենթակետում «տնօրենի ատեստավորման» բառերից հետո լրացնել «և հավելավճարի տրամադրման» բառերը:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
««ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), համաձայն որի հանրակրթության համակարգում անցում է կատարվել համընդհանուր ներառական կրթության: ՀՀ կրթական համակարգը որդեգրել է համընդհանուր ներառական կրթության ապահովման քաղաքականությունը և կարևորվել է դպրոցներում այնպիսի միջավայրի ստեղծումը, որտեղ ապահովվում է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիությունը, հավասար մասնակցության հնարավորությունը, և բացառվում է երեխայի նկատմամբ խտրականության ցանկացած դրսևորում: Այնուամենայնիվ գործող իրավակարգավորումների պայմաններում մանկավարժի իրավունքներում և պարտականություններում ամրագրված չէ դասարանում խտրականությունից զերծ միջավայր ստեղծելու և կրթական գործընթացում բոլոր սովորողների ներառման սկզբունքը, այդ թվում՝ արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում:
Համաձայն գործող օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2.1 կետի երեխայի անհատական ուսուցման պլանի մշակմանն ու իրականացմանը ծնողի մասնակցությունը հանդիսանում է ծնողի իրավունքը: Կարգավորումներով սահմանված չէ ծնողի պարտավորությունը մասնակցելու երեխայի անհատական ուսուցման պլանի մշակման և իրականացման գործընթացներին: Այնինչ նրա մասնակցությունը և աջակցությունը կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող աշակերտի կրթական գործընթացին էական նշանակություն ունի:

Բացի այդ, ներառական կրթության կազմակերպման հարցում նշանակալից դեր ունեն կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող սովորողների ծնողները և նրանց կողմից ստեղծված ծնողական փոխօգնության խմբերը, որոնք օգնում են ոչ միայն միևնույն իրավիճակում հայտնված ծնողներին, այլև ուսուցչական կազմին արդյունավետ կրթական գործընթաց ապահովելու գործում: Օրենքի գործող կարգավորումներով, սակայն, երաշխավորված չէ ծնողների ծնողական խմբեր ստեղծելու իրավունքը:

2021 թվականին Հանրակրթության մասին օրենքում տեղի ունեցած փոփոխություններով կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի շրջանակում թվարկվել է նաև բացառիկ ընդունակություններ ունենալը, սակայն օրենքի հետագա կիրարկումը բարդանում է՝ հասկացության սահմանված չլինելու պարագայում, ինչը նվազեցնում է այս ուղղությամբ անհրաժեշտ կրթական հավելյալ ծառայությունների և միջավայրի ձևավորումը:

Ուսումնական հաստատությունների ցանկերի հաստատման լիազորող նորմ գործող օրենսդրությունում առկա չէ, ինչը հատկապես խնդիր է ստեղծում օրինակ, մասնագիտացված հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների կանոնադրությունների գրանցման համար: Բացի այդ, տնօրենի ատեստավորման լիազորող նորմի հաստատման դրույթում ևս առկա է բաց, ինչը թույլ չի տալիս ատեստավորման հաջող արդյունքի դեպքում հավելավճար կիրառել, ինչը համահունչ է կառավարության քաղաքականությանը՝ բոլոր ոլորտներում, այդ թվում՝ կրթության ոլորտում ստեղծել մասնագիտական զարգացման և

վարձատրության փոխկապակցված համակարգ: Հարկ է նշել, որ նման համակարգ արդեն իսկ ներդրված է ուսուցիչների համար՝ ի դեմս կամավոր ատեստավորման և տարակարգերի գործիքակազմի:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Նկատի ունենալով վերը նշվածը մշակվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը, որով առաջարկվում է վերանայել մանկավարժների և սովորողների ծնողների իրավունքները և պարտականությունները, մասնավորապես՝

- մանկավարժական աշխատողների պարտականություններում ամրագրել բոլոր սովորողների ակտիվ մասնակցությունը ուսումնադաստիարակչական գործընթացներում, այդ թվում՝ արտադասարանական եւ արտադպրոցական միջոցառումներում խթանելու, դասարանում խտրականությունից զերծ միջավայր ապահովելու և աշակերտների մեկուսացումը կանխարգելելու պարտավորությունը,
- սահմանել դպրոցում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք սովորողների ծնողների փոխօգնության խումբ ստեղծելու իրավունքը՝ երեխայի կրթության իրավունքի իրացման, մանկավարժների և ծնողների հետ արդյունավետ փոխգործակցության համար,
- սովորողի ծնողի պարտավորություններում ամրագրել՝ երեխայի անհատական ուսուցման պլանի իրականացմանը մասնակցելը, դասապատրաստմանը աջակցելը և հարգալից վերաբերմունք դաստիարակելը նաև մարդու և պետության նկատմամբ,
- ամրագրել «բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) անձ»-ի սահմանումը, այն է՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ, որի ինտելեկտուալ, ստեղծագործական, սոցիալական և ֆիզիկական ներուժը կամ դրանցից մի քանիսը ակնհայտորեն միջինից բարձր են, որի հետևանքով անձը իր ներուժը լիարժեք զարգացնելու համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների (ծառայությունների, գործողությունների, միջոցների) կարիք ունի,
- լիազորող նորմեր սահմանել, որոնք վերաբերում են ուսումնական հաստատությունների ցանկերի հաստատմանը, ինչպես նաև տնօրենի ատեստավորման հաջող արդյունքի դեպքում նաև հավելավճարի կիրառմանը:

Ակնկալվող արդյունքը.

Օրենքի նախագծի ընդունմամբ կվերանայվեն մանկավարժական աշխատողների և սովորողի ծնողների իրավունքներն ու պարտականությունները, կստեղծվեն օրենսդրական լրացուցիչ հիմքեր ներառական կրթության կազմակերպումն ավելի արդյունավետ դարձնելու, ինչպես նաև բացառիկ ընդունակություններ ունեցող սովորողների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, հանրակրթության ոլորտում ուսումնական հաստատություններին ուղղված քաղաքականության հստակ և թափանցիկ իրականացման համար:

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱՎԵՐՅԱԼ

Հոդված 1. «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.10-ին կետով.
«10.10) **բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) անձ՝** կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ, որի ինտելեկտուալ, ստեղծագործական, սոցիալական և ֆիզիկական ներուժը կամ դրանցից մի քանիսը ակնհայտորեն միջինից բարձր են, որի հետևանքով անձը իր ներուժը լիարժեք զարգացնելու համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների (ծառայությունների, գործողությունների, միջոցների) կարիք ունի.»:
Հոդված ~~2.~~1. «Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 27-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր՝ 11-րդ կետով, հետեւյալ բովանդակությամբ. «11) Խթանել բոլոր սովորողների ակտիվ մասնակցությունը ~~կրթական գործընթացում~~ ուսումնադաստիարակչական գործընթացներում, այդ թվում՝ արտադասարանական եւ արտադպրոցական միջոցառումներում՝ դասարանում ապահովելով խտրականությունից զերծ միջավայր ~~դասարանում~~ եւ կանխարգելելով աշակերտների մեկուսացումը:»:

*Հոդված **3** ~~2~~*. Օրենքի 28-րդ հոդվածի՝

1. ~~1-ին մասին 2.1 կետն ուժը կորցրած ճանաչել:~~ 1-ին մասի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2.1 մասնակցելու երեխայի անհատական ուսուցման պլանի մշակմանը.»:

2. 1-ին մասը լրացնել նոր՝ 8-րդ կետով, հետեւյալ բովանդակությամբ. ~~«8) դպրոցում ստեղծելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողների փոխօգնության խումբ՝ երեխայի կրթության իրավունքի իրացման, մանկավարժների եւ ծնողների հետ արդյունավետ փոխգործակցության, ինչպես նաեւ այլ դպրոցների նմանատիպ խմբերի հետ համագործակցության համար:»~~ «8) երեխայի կրթության իրավունքի իրացման, մանկավարժների և ծնողների հետ արդյունավետ փոխգործակցության, ինչպես նաև այլ դպրոցների նմանատիպ խմբերի հետ համագործակցության համար դպրոցում ստեղծելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ծնողների փոխօգնության խումբ կամ միանալու արդեն ստեղծված փոխօգնության խմբերին,»:

3. 2-րդ մասի 1-ին կետում «կրթություն ստանալու համար» բառերից հետո լրացնել «եւ աջակցել դասապատրաստմանը» բառերը:

4. 2-րդ մասի 3-րդ կետում «հարգալից վերաբերմունք» բառերից հետո լրացնել «մարդու, պետության,» բառերը:

~~5. 2-րդ մասի 4-րդ կետը խմբագրել հետեւյալ բովանդակությամբ. «4) դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների եւ հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության, շրջակա միջավայրի, այդ թվում՝ բնության եւ կենդանիների նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների եւ մշակույթների նկատմամբ.»:~~

~~6.~~ 5. 2-րդ մասը լրացնել նոր՝ 9-րդ կետով՝ հետեւյալ բովանդակությամբ. «9. մասնակցել երեխայի անհատական ուսուցման պլանի ~~մշակմանն ու~~ իրականացմանը:»:

Հոդված 4. Օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով. «4.1) հաստատում է ուսումնական հաստատությունների ցանկերը.»:
Հոդված 5. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.18-րդ ենթակետում «տնօրենի ատեստավորման» բառերից հետո լրացնել «և հավելավճարի տրամադրման» բառերը:
~~*Հոդված 3.* Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ~~

~~1.~~ Հոդված 6 ~~3~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

~~2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(Պ-606-31.05.2023,07.09.2023-ԳԿ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասում ««մարդու, պետության»» բառերը փոխարինել ««մարդու, պետության,»» բառերով՝ «Հանրակրթության մասին» օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում ինկորպորացման հետ կապված խնդիրներից խուսափելու նպատակով:	Առաջարկն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է
2.	ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդված	Նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ մասից «, իսկ ընտանիքի, մեծահասակների, պետական եւ մայրենի լեզվի» բառերից հետո հանել «պետության,» բառը» բառերը հանել:	Առաջարկն ընդունվել է: Հոդվածը խմբագրվել է:	Ընդունվել է
3	Հեղինակ	«Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդված	«Հանրակրթության մասին» 2009 թվականի հուլիսի 10-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.10-ին կետով. «10.10) բացառիկ ընդունակություններ ունեցող (օժտված) անձ՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ, որի ինտելեկտուալ, ստեղծագործական, սոցիալական և ֆիզիկական ներուժը կամ դրանցից մի քանիսը ակնհայտորեն միջինից բարձր են, որի հետևանքով անձը իր ներուժը լիարժեք		Ընդունվել է

			զարգացնելու համար անհրաժեշտ խելամիտ հարմարեցումների (ծառայությունների, գործողությունների, միջոցների) կարիք ունի.»:		
4	Հեղինակ	Օրենքի 29-րդ հոդված	29-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին կետով. «4.1) հաստատում է ուսումնական հաստատությունների ցանկերը.»:		Ընդունվել է
5	Հեղինակ	Օրենքի 30-րդ հոդված	30-րդ հոդվածի 1-ին մասի 26.18-րդ ենթակետում «տնօրենի ատեստավորման» բառերից հետո լրացնել «և հավելավճարի տրամադրման» բառերը:		Ընդունվել է
6	Հեղինակ	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից»:		Ընդունվել է